ԱԳՐՈԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՄՊԼԵՔՍԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ա. Փ. ԵՆԳՈՅԱՆ

Ելնելով գյուղացիության շահերից և գյուղատնտեսության մեջ անտեսական հարաբերությունների կարգավորման առանձնահատկություններից՝ կուսակցությունն իր ագրարային քաղաքականությունն առանձնացնում է որպես գործունեության համեմատաբար ինքնուրույն ուղղություն։ Ագրոարդյունաբերական կոմպլեքսը (ԱԱԿ) արդի ժամանակաշրջանում կուսակցության ագրարային քաղաքականության հիմնական օղակներից է։

ԱԱԿ-ի էության և շրջանակների հարցի շուրջ գոյություն ունեն տարբեր կարծիքներ։ Որոշ տնտեսագետներ ԱԱԿ-ը գիտում են որպես պարենային կոմպլեքս, որը ներգրավում է միայն պարեն արտադրող ճյուղերը[1]։ Ոմանք էլ նրա կազմում ընդգրկում են 3 ոլորտ՝ գյուղատնտեսական սպասարկում, արտադրական միջոցների արտադրություն անմիջապես գյուղատնտեսության համար և, վերջապես, մթերման, վերամշակման, տեղափոխման, պահպանման, արտադրանքի սպառման ճյուղեր[2]։ Մի շարք գիտնականների կարծիքով, ԱԱԿ-ի արդյունավետ գործունեության ապահովումը, այդ երեք ավանդական ոլորտներից բացի, անհնար է առանց զարգացած ինֆրաստրուկտուրայի։ Այդ կապակցությամբ նրանք առաջարկում են ԱԱԿ-ի կազմում ներգրավել ևս երկու ինֆրաստրուկտուրային օղակ՝ արտադրական, որն ընդգրկում է նյութատեխնիկական մատակարարումը, սպասարկումն ու կապը, և սոցիալական, որը ներառում է բնակարանային ու կոմունալ տնտեսությունը, առողջապահությունը (գյուղում), ինչպես նաև ԱԱԿ-ի բոլոր ոլորտները կադրերով ապահովելու նպատակով ստեղծված համապատասխան համակարգը[3]։ Այդ տեսակետն առավել չափով է համապատասխանում ԱԱԿ-ի էությանը և նրա զարգացման օբյեկտիվ պրոցեսների բովանդակությանը։

ԱԱԿ-ը ձևավորվում է ոչ թե ինքնաբավ, այլ արտացոլում է տարբեր, բայց փոխկապակցված գործունեության ձևերի ինտեգրացման ռեալ ընթացքը։ Դրանցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես սպառման ապրանքների վերարտադրության միասնական պրոցեսի փուլերից և բաղադրիչ մասերից մեկը։ Այստեղ գյուղատնտեսության արտադրանքը ծառայում է իբրև նյութական հիմք։ Օբյեկտիվ զարգացող ինտեգրացիայի ընթացքում արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունները միաձուլվում են մեկ միասնական ագրոարդյունաբերական արտադրության պրոցեսում։ Վ. Տիխոնովի կարծիքով ինտեգրացումն ագրոարդյունաբերական արտադրության ձևավորման պրոցեսի բովանդակությունն է, իսկ ԱԱԿ-ի ստեղծումը՝ այդ պրոցեսի ձևավորումը[4]։ Պրոբլեմի նկատմամբ այդպիսի մոտեցումը լիովին գիտական է և արժանի է հավանության։

Հետպատերազմյան առաջին քսան տարիների ընթացքում ձևավորվեցին գյուղատնտեսությանը սպասարկող խոշոր մեքենաշինական և վերամշակող ճյուղերը։ Ուժեղացավ դրանց ազդեցությունը կոլտնտեսությունների և սով-

---

[1] В. И. Кравцова, Общественное питание в народнохозяйственном комплексе, Алма-Ата, 1976, с. 61.

[2] Народнохозяйственный агропромышленный комплекс, М., 1980, с. 5.

[3] Межхозяйственная кооперация и агропромышленная интеграция, Рига. 1979; Э. Н. Крылатых, Пропорции и приоритеты в развитии АПК, М., 1983, с. 54.

[4] Развитие аграрных отношений на современном этапе, М., 1983, с. 16.

խոզների գործունեության արդյունքների վրա։ Սակայն ԱԱԿ-ի ապագա պարտնյորների միջև կապերն իրականացվում էին տարբեր՝ մթերող, սպառող ու մատակարարող կազմակերպությունների միջոցով և կրում էին միջգերատեսչական բնույթ։ Շատ հարցերում խանգարում էր նաև անձի պաշտամունքի տարիներին ձևավորված՝ ժողովրդական տնտեսության կառավարման վերին աստիճանի կենտրոնացված համակարգը։ Տեղերում ժողտնտխորհների ստեղծման և մինիստրությունների վերացման միջոցով դեմոկրատական կառավարման ձևեր արմատավորելու փորձերը ցանկալի արդյունքների չհանգեցրին։ Այս տարիներին դրսևորվեց նաև տնտեսությունը զուտ տնտեսական մեթոդներով կառավարելու շատ ղեկավարների անընդունակությունը։ ԱԱԿ-ի ձևավորման այս փուլում դեռևս հստակ չէր կանխատեսված արտադրության վերջնական արդյունքներում պարտնյորների՝ միմյանց նկատմամբ շահագրգռվածության տնտեսական մեխանիզմի որոնումը և համապատասխան կառավարման համակարգի ստեղծումը։ Այդպիսի որոնումը բնորոշ է այն փուլին, որի սկիզբն ընկնում է 1960-ական թվականների կեսերին։ ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումի որոշումները, չնայած իրենց առաջադիմական բնույթին, հանգեցին միայն էքստենսիվ փոփոխությունների (զգալիորեն շատացան կապիտալ ներդրումները գյուղատնտեսության մեջ և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերում, ապագա ԱԱԿ-ի համակարգում յուրացվեցին նոր հզորություններ)։ Այդուհանդերձ, դրանք ևս որոշակի ազդեցություն ունեցան ԱԱԿ-ի ձևավորման գործում։ Գյուղատնտեսության և նրան սպասարկող ճյուղերի նյութատեխնիկական բազայի զարգացումը հանգեցրեց ինտեգրացիոն պրոցեսների հետագա խորացմանը, միջտնտեսային և ագրոարդյունաբերական տիպի ձեռնարկությունների ու միավորումների շրջանակներում կազմակերպական-տեխնիկական և տնտեսական միասնության նոր ձևերի ստեղծմանն ու լայն տարածմանը։

ՍՄԿԿ XXIV—XXVI համագումարներում, Կենտկոմի 70—80-ական թվականներին կայացած պլենումներում, որոնք ընդունեցին գյուղատնտեսության զարգացման մասին համապատասխան որոշումներ, խոսքը ոչ միայն միջտնտեսային կոոպերացիայի և ագրոարդյունաբերական ինտեգրացիայի զարգացման, այլև հասարակական արտադրության մի ամբողջական ոլորտի մասին էր՝ իր տարածքային ստորաբաժանումներով։ Դրանց վերջնական, միասնական նպատակն էր նվազագույն ծախսերով բավարարել գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ երկրի պահանջները։ Նույն ժամանակ հաստատվեց նաև այդ համակարգի միասնական անվանումը՝ ագրոարդյունաբերական կոմպլեքս։

Ինչպես երևում է, 1980-ական թվականների սկզբին ԱԱԿ-ը՝ որպես միմյանց հետ փոխկապակցված ժողովրդատնտեսական ճյուղերի ամբողջություն, հիմնականում ձևավորվեց։ Այս հանգամանքը ժամանակի պահանջ դարձրեց ԱԱԿ-ի արդյունավետ կառավարման համակարգի առաջացումը։ Պուսակցության կողմից նման փորձ արվեց 1982—1985 թթ., որի հետևանքով վերից վար ստեղծվեցին այս համակարգի կառավարման մարմիններ։ Չնայած իրենց գործունեության ցածր արդյունավետությանը, դրանք հնարավորություն տվեցին ԱԱԿ-ը մյուս ժողովրդատնտեսական կոմպլեքսներից կազմակերպորեն առանձնացնել։ ԱԱԿ-ի ձևավորման պատմության վերլուծությունը թույլ է տալիս այդ պրոցեսը բաժանել հետևյալ փուլերի. 1966—1976 թթ.՝ ԱԱԿ-ի ձևավորման սկզբնական շրջան, 1976—1982 թթ.՝ ԱԱԿ-ի համակարգի միջճյուղային կապերի զարգացում և հիմնականում նրա ձևավորում, 1982—1985 թթ.՝ ժամանակակից ԱԱԿ-ի կազմակերպական ձևավորում, 1986 թ. սկսած՝ ԱԱԿ-ի զարգացում իր սեփական հիմքի վրա և նրա թևակոխումը խոր ինտեգրացված արտադրական համակարգի։

Ինչպես տեսնում ենք, ԱԱԿ-ի ձևավորման պրոցեսը դեռ չի կարելի ավարտված համարել։ 1986 թ. սկիզբ է առնում մի շրջան, որի ընթացքում այն պետք է վերածի օրգանապես ինտեգրացված, հստակ հաշվեկշռված և ներդաշնակորեն զարգացող արտադրական համակարգի։ ԱԱԿ-ի ձևավորման

պրոցեսը կարելի է ավարտված համարել այն ժամանակ, երբ ապահովվի նրա բաղադրիչ բոլոր մասերի գործունեության ամուր փոխկապվածությունը, ստեղծվի գործուն մեխանիզմ, որն ուղղվի դրանց ժողովրդատնտեսական վերջնական էֆեկտի բարձրացմանը։

Այս ուղղությամբ կուսակցության կողմից տարվող աշխատանքներում զգալի տեղ է գրավում ԽՄԿԿ Կենտկոմի 1989 թ. մարտյան պլենումը։ Նրա որոշումները կոչված են արմատապես վերափոխելու ԱԱԿ-ում տիրող իրավիճակը։ Երկրի ժողովրդական տնտեսության այս սեկտորի պատմության խոր վերլուծությունը պլենումում ցույց տվեց, որ ԱԱԿ-ի զարգացումը անհնարին է առանց այնպիսի պայմանների ստեղծման, ինչպիսիք են՝ նրա նյութա-տեխնիկական բազայի ամրապնդումը, գյուղի և քաղաքի միջև եղած հարաբերությունների արդարացի կոորդինացումը, տնտեսության կառավարման փոխադրումը դեմոկրատական հիմքերի վրա, գյուղի սոցիալական վիճակի բարելավումը և գյուղացուն դարձնելը, որպես հողի սեփականատեր[5]։

Այս համակարգում կարևոր տեղ է հատկացվում ԱԱԿ-ի կառավարման ավելի արդյունավետ ձևերի ստեղծման պրոբլեմին։ Վերլուծենք կուսակցության կողմից այդ ուղղությամբ տարվող աշխատանքի փորձը։

Գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման պրոցեսների խորացումը 1970-ական թվականներին հանգեցրեց ԱԱԿ-ի համակարգում կառավարման բազմաթիվ ճյուղային մարմինների առաջացմանը։ Այս հանգամանքը հանգեցրեց արդեն գործող համակարգի վրա կառավարման նոր կառուցվածքների շերտադասմանը, որն իր հերթին զգալիորեն բարդացրեց ԱԱԿ-ի ճյուղերի միջև արտադրական հարաբերությունները։ Գյուղատնտեսության մեջ և դրա հետ կապված ճյուղերում կառավարման բազմաթիվ մարմինների ստեղծումը առաջ բերեց կրկնողություն և զուգահեռականություն, ուժեղացրեց ղեկավարման նախկին վարչահրամայական մեթոդները, հանգեցրեց վարչական ապարատի քանակական աճի, անմիջապես կոլտնտեսություններից և սովխոզներից որակյալ մասնագետների զգալի մասի արտահոսքի և, իբրև այս ամենի հետևանք, ցածրացրեց կառավարման արդյունավետությունը։ ԱԱԿ-ի պլանավորման ու կառավարման գործում իշխում էր գերատեսչական (ճյուղային) սկզբունքը։ Կոմպլեքսի համակարգում ընդգրկված ճյուղերը տնտեսապես մասնատված էին, դրանց գերատեսչական շահերը շատ դեպքերում չէին համապատասխանում ամբողջ ԱԱԿ-ի վերջնական նպատակներին։

ԱԱԿ-ի պարտնյորների գործունեության միջև եղած անհամաձայնեցվածությունը հատկապես զգացվում էր գյուղական շրջաններում, որոնք ոչ միայն վարչատարածքային միավորներ էին, այլև սոցիալ-տնտեսական հզոր համակարգեր։ Այս պրոբլեմը հատկապես սրվեց կառավարման կենտրոնացված եղանակների առկայության պատճառով, որոնք պահանջում էին գյուղում տեղի ունեցող բոլոր պրոցեսների նկատմամբ ամենախիստ վերահսկողության սահմանում։ Նման իրավիճակում գյուղատնտեսության շրջանային վարչություններն այլևս չէին կարող պահպանել իրենց կենսունակությունը, որովհետև հնարավորություն չունեին կառավարելու այդպիսի համակարգերով։ Դրանց ֆունկցիաները սահմանափակված էին միայն գյուղատնտեսությամբ։ Ժամանակի տրամաբանությունը թելադրում էր գյուղում ստեղծել կառավարման այնպիսի մարմիններ, որոնք ի վիճակի կլինեին ապահովել ղեկավարությունը ԱԱԿ-ի բոլոր ճյուղերի նկատմամբ։ Այս ուղղությամբ առաջին քայլն արվեց գյուղական շրջաններում և մարզերում։ ԽՄԿԿ Կենտկոմի 1982 թ. մայիսյան պլենումի որոշումների համաձայն գյուղական շրջաններում ստեղծվեցին շրջանային ագրոարդյունաբերական միավորումներ (ՇԱԱՄ)։ Սակայն ԱԱԿ-ի համակարգում պահպանվող միջգերատեսչական մասնատվածությունը դրանց հնարավորություն չտվեց լիովին կիրառել իրենց

---

[5] Правда, 16. III. 1989.

իրավունքները։ Միավորումները մնացել էին առանց կառավարման վերին օղակների։ Միութենական հանրապետությունների մինիստրների խորհուրդների նախագահությունների կից գործող ԱԱԿ-ի հարցերով զբաղվող հանձնաժողովները չէին օժտվել համապատասխան իրավունքներով, դրանց աշխատանքը կրում էր խորհրդակցական բնույթ։ Անհրաժեշտություն ստեղծվեց ԱԱԿ-ի կառավարման միասնական մարմիններ կազմավորել արդեն հանրապետական և համամիութենական մակարդակով։ Կուսակցության կողմից այդպիսի խնդիր առաջ քաշվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումում։ Նույն տարվա նոյեմբերին երկրում կազմավորվեց ԱԱԿ-ի կառավարման միասնական մարմին՝ միութենական-հանրապետական ագրոարդյունաբերական պետական կոմիտե։ Դրա ստեղծումը հանգեցրեց նաև ՇԱԱՄ-երի և տարածքային այլ միավորումների կառավարման համակարգի փոփոխման։

Ինչպես տեսնում ենք, 1982—1985 թթ. մեր երկրում ստեղծված ԱԱԿ-ի ղեկավարման կառուցվածքը տնտեսության կառավարման գոյություն ունեցող վերին աստիճանի կենտրոնացված համակարգի հետևանք էր։ Մյուս կողմից, նշված ժամանակաշրջանում պարենային պրոբլեմի առկայությունը պահանջում էր գյուղի աշխատավորներին դարձնել ագրոարդյունաբերական արտադրության կառավարման ակտիվ մասնակիցներ։ Այդ կապակցությամբ ՇԱԱՄ-երի գործունեության հիմքում դրվել էին որոշակի դեմոկրատական սկզբունքներ (ՇԱԱՄ-երի խորհուրդների ընտրություն, միջճյուղային հանձնաժողովների ստեղծում և այլն)։ Սակայն գոյություն ունեցող աշխատանքի վարչահրամայական և դիրեկտիվ բյուրոկրատական մեթոդները խանգարեցին դրանց կիրառմանը։ Թվում էր, թե պետագրոարդի ստեղծումից հետո ԱԱԿ-ի զարգացումը կընթանա էլ ավելի բարձր տեմպերով, քանի որ այդ մարմինը կոչված էր լուծելու ամենակարևոր խնդիրներից մեկը՝ միջգերատեսչական մասնատվածության վերացումը։ Սակայն այդ քայլը չհանգեցրեց ԱԱԿ-ի կառավարման շրջանային և մարզային մարմինների ամրապնդմանը։ Չնայած որոշակի կառուցվածքային փոփոխություններին, դրանք մնում էին վարչական մեթոդներով աշխատող կազմակերպություններ և ամենևին չէին նպաստում տնտեսությունն իսկական տնտեսական մեթոդներով ղեկավարելուն։ Այս մարմինները գործում էին ոչ թե միավորումների անդամների շահերը բավարարելու նպատակով, այլ տարբեր ճանապարհներով սուբյեկտիվորեն կաշկանդում էին տնտեսության զարգացման օբյեկտիվ ընթացքը։

ԱԱԿ-ի կառավարման կատարելագործման հարցը քննարկվեց 1987 թ. նոյեմբերին ՍՄԿԿ Կենտկոմում կայացած գիտագրակտիկ կոնֆերանսում[6]։ Նրա մասին խոսվեց նաև կուսակցության համամիութենական XIX կոնֆերանսում[7]։ Այստեղ նշվեց այնպիսի ԱԱՄ-երի գործունեության արդյունավետության մասին, ինչպիսիք են ագրոարդյունաբերական կոմբինատները, ագրոֆիրմաները, գիտաարտադրական և արտադրական համակարգերը։ Մեր կարծիքով, նման միավորումներում ագրոարդյունաբերական ինտեգրացիան հասնում է իր կատարյալ մակարդակին։ Բացի այդ, մարզային և շրջանային շատ կուսակազմակերպություններ որոշակի փորձ էին կուտակել ԱԱԿ-ի կառավարման այլ ալտերնատիվ տարբերակների հայթայթման ուղղությամբ։

Երկրի որոշ շրջաններում ստեղծվում էին ԱԱՄ-եր, որոնց աշխատանքը հիմնված է ագրոարդյունաբերական կոոպերացիայի սկզբունքորեն նոր ձևի վրա։ Դրանց կազմի մեջ մտնում են արտադրական-տեխնիկական, շինարարական, անասնապահական, բուսաբուծական և գյուղատնտեսության հետ կապ ունեցող այլ կոոպերատիվներ։ Ի դեպ, նման ԱԱՄ-երում ընդգրկված են ինչպես կոոպերատիվ, այնպես էլ պետական ձեռնարկություններ։ Այդ-

---

6 Նույն տեղում, 20.XI.1987։

7 См.: Материалы XIX Всесоюзной конференции Коммунистической партии Советского Союза, М., 1988, с. 10—11.

պիսի միավորումների գործունեությունը կոորդինացվում է ԱԱՄ-երի վարչությունների կողմից ստեղծված փոքրաթիվ վարչական ապարատներում[8]։ ԱԱՄ-ի կառավարման կատարելագործման այս ճանապարհը հնարավորություն է ստեղծում նրա ողջ աշխատանքը ենթարկել գյուղատնտեսությանը։

Որոշ շրջաններում կիրառվեց ԱԱՄ-երի կառավարման հետաքրքիր եղանակ։ Այստեղ հրաժարվում էին ինչպես ՇԱԱՄ-երից, այնպես էլ վարչական ապարատներից։ Ագրոարդյունաբերական արտադրության բարձր ցուցանիշների հասնելու համար նման ԱԱՄ-երում հիմնական շեշտը դրվում է միավորումների բոլոր օղակների լրիվ տնտհաշվարկի, ինքնաֆինանսավորման, ինքնածախսածածկման և ինքնավարման սկզբունքներով աշխատանքի անցնելու վրա[9]։ Շրջանային ԱԱԿ-ի կառավարման այդպիսի ձևը նախատեսում է ինչպես ապրանքադրամական հարաբերությունների ակտիվ կիրառում, այնպես էլ՝ ագրոարդյունաբերական արտադրության մեջ շուկայական հարաբերությունների տարրերի ներդրում։ Նման ԱԱՄ-երի գործունեությունն անհնար է առանց կառավարման իսկապես տնտեսական մեթոդների գործածման։

ՍՄԿԿ Կենտկոմի 1989 թ. մարտյան պլենումը քննարկելով ագրարային քաղաքականության պրոբլեմները, առանձնակի ուշադրություն դարձրեց ԱԱԿ-ի կառավարման համակարգի վերակառուցման հարցերին։ Նկատի ունենալով, որ Միության հանրապետություններն իրավունք են ստացել տնօրինելու համապատասխան տարածքային ԱԱԿ-երը, դրանք տեղափոխելով ինքնածախսածածկման, որը զգալիորեն բարձրացնում է հանրապետական պետագրոարդերի դերն ու նշանակությունը, պլենումը նպատակահարմար գտավ վերացնել ՍՍՀՄ պետագրոարդը և դրա փոխարեն ստեղծել ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին կից պարենի և մթերումների հարցերով զբաղվող պետական հանձնաժողով։ Այս մարմինը կոչված է ապահովելու երկրի ԱԱԿ-ի ներդաշնակ և համամասնորեն զարգացումը, չմիջամտելով հանրապետությունների համապատասխան տնտեսական համակարգերի գործունեությանը։ Բացի այդ, պլենումում խորհուրդ տրվեց տեղերում ՇԱԱՄ-երը փոխարինել ԱԱԿ-ի կառավարման ավելի դեմոկրատական մարմիններով, որոնց կազմավորումը պետք է դրվի կամավորության և տնտեսական նպատակահարմարության հիմքերի վրա։

Արդի ժամանակաշրջանում մեծ նշանակություն է տրվում հանրապետական պետագրոարդերի ֆունկցիաների կրճատմանն ու ճշգրտմանն այն առումով, որ դրանք նպաստեն բոլոր արտադրական օղակների ինքնուրույնության բարձրացմանը, կառավարման տնտեսական մեթոդների արմատավորմանը։ Մեր կարծիքով դրանց գործունեության հիմնական ուղղություններ պետք է հանդիսանան ԱԱԿ-ի ճյուղերում գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրումը (ոչ թե ստիպողական եղանակով, այլ դրանց մասին սպառիչ ինֆորմացիա և անհրաժեշտ առաջարկություններ տալով), կոմպլեքսի համամասնորեն և ներդաշնակ զարգացման ապահովումը (պետական պատվերների միջոցով), օգնությունը սկզբնական արտադրական օղակներին՝ արտասահմանի հետ կապերն ամրապնդելու ուղղությամբ և այլն։ ԱԱԿ-ի կառավարման այս մարմինները պետք է հանդիսանան նաև ինֆորմացիայի կենտրոններ, որոնք կնպաստեն տնտեսությունների, ձեռնարկությունների և միավորումների միջև տնտեսական պայմանագրերի կնքմանը։

Ամփոփելով շարադրածը, նշենք, որ կուսակցության և կառավարության վերջին որոշումների կենսագործումն ամենևին չի արգելակում ԱԱԿ-ի կառավարման մեխանիզմի կատարելագործման պրոցեսը։ Ինչպես երկրի ժողովրդատնտեսական բոլոր համակարգերում, այնպես էլ ԱԱԿ-ում կառավարման կատարելագործումը կընթանա այս սիստեմի արտադրական ուժերի զարգացմանը զուգահեռ։

---

8 Правда, 1. XII. 1987.

9 Известия, 13. III. 1988.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ФОРМИРОВАНИЯ АГРОПРОМЫШЛЕННОГО КОМПЛЕКСА

А. П. ЕНГОЯН

Резюме

Агропромышленный комплекс (АПК) формируется не произвольно, а как отражение реально развивающегося процесса интеграции разнородных, но взаимосвязанных стадий единого процесса воспроизводства предметов потребления, где материальная основа—продукция сельского хозяйства. Анализ истории формирования АПК позволяет провести периодизацию этого процесса, который с середины 60-ых годов включает 4 этапа. Формирование АПК закончится с его преобразованием в глубоко интегрированную производственную систему.

АПК—единственная сфера экономики, где была создана система межотраслевых органов управления сверху донизу. Этот фактор, а также происходящие в системе АПК процессы совершенствования его хозяйственного механизма и укрепления материально-технической базы диктовали необходимость поиска наиболее приемлемых форм управления АПК.